ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ք. ԳՈՐԻՍ, ԱՎԱՆԳԱՐԴ 4
Հեռ. (0-284) 2-27-67
Ֆաքս (0-284) 2-36-03
gorissu@mail.ru

N 01-19/61
"23" 03 2011թ.

Գիտության պետական կոմիտեի
նախագահ Ս. Հարությունյանին

Գորիսի պետական համալսարանը կազմակերպում է միջազգային գիտաժողով՝ բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ուղղությամբ:

Գիտաժողովին ներկայացվող հոդվածների պահանջները կցվում են:

Գիտաժողովի կազմակերպչական հանձնախմբի կողմից հավանության արժանացած աշխատանքները կտպագրվեն Գորիսի պետական համալսարանի միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածուում:

Աշխատանքներն ընդունվում են մինչև ս.թ. մայիսի 2-ը՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդի 4 հասցեով կամ էլեկտրոնային փոստով՝ conferance@rambler.ru, vrazmik@rambler.ru:

Գիտաժողովը կանցկացվի Գորիսի պետական համալսարանում՝ 2011թ. մայիսի 26-ին և 27-ին, սկիզբը՝ ժամը 12^{00}:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ (0284) 2 58 90, (093) 59 80 58, (091) 00 61 29:

ՌԵԿՏՈՐ՝ ՅՈՒ. ՍԱՖԱՐՅԱՆ

28 03 5805-11 2011

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Միջազգային գիտաժողով

Հոդվածին ներկայացվող պահանջները

Հոդվածը կարելի է ներկայացնել հայերենով, ռուսերենով կամ անգլերենով: Տեքստի տառատեսակները հայերենը՝ Arial Armenian, ռուսերենը՝ Arial LatRus, անգլերենը՝ Arial: Տեքստի տառաչափը՝ 10pt, տողերի հեռավորությունը՝ (Line spacing) 1, էջի ֆորմատը՝A4 (210x297), աշխատանքային դաշտը 135x200մմ (ներառյալ էջահամարը footer 4,6 սմ), լուսանցքները. վերևից՝ (Top) 5սմ, ներքևից՝ (Bottom) 5,1 սմ, ձախից՝ (Left) 5,75սմ, աջից՝(Right) 1,75 սմ:

Էջի վերևի ձախ մասում տրվում է ՀՏԴ (УДК): Մեկ տող ներքև տրվում է վերնագիրը գլխատառերով, մեջտեղում, **bold**, 12 տառաչափով, իսկ հեղինակի(ների) Ա.Հ. Ազգանունը (ները) փոքրատառերով, **bold**, *Italic*, 10 տառաչափով: Եթե աշխատանքը հայերեն է, մեկ տող ներքև տրվում է հայերեն լեզվով համառոտագիրը (аннотация)՝ 9 տառաչափով, 5-6 առանցքային բառերով, վերջում, գրականությունից հետո տրվում է ռուսերեն և անգլերեն լեզուներով վերնագիրը՝ 12 տառաչափ **bold**, հեղինակները՝ **bold**, Italic, 10, համառոտագրի տեքստը և առանցքային բառերը 9 տառաչափով: Հոդվածի ռուսերեն և անգլերեն տարբերակներում համապատասխանաբար փոխվում են անոտացիաները: Հայերեն և ռուսերեն հոդվածների մեջ տողադարձերը կատարել «Ctrl պլյուս-(գծիկ)» միջոցով:

Նկարները և աղյուսակները տեղադրվում են տեքստում այդ մասին նշում կատարելուց հետո, նույն կամ հաջորդ էջում և ունեն միջանցիկ համարակալում: Նկարի գրաֆիկական դաշտը հնարավորին չափ անհրաժեշտ է բեռնաթափել ավելորդ նշանակումներից և բացատրություններից: Նկարի անվանումը տրվում 9 տառաչափով (*Italic*, **bold**), իսկ նկարատակ արտահայտությունը՝ 9 տառաչափով սովորական: Նկարները <u>ներկայացնել սև-սպիտակ տարբերակով</u>, խմբավորված: Կոորդինատային առանցքների վրա պարտադիր է հԼ համակարգով ընդունված մեծությունների չափողականությունների ներկայացումը (բացի տեսական կորեր կամ հարաբերական մեծություններ պարունակող գրաֆիկական նյութերից):

Աղյուսակները պետք է ունենան վերնագրային բացատրություններ և համարակալում, որոնք տրվում են *Italic*, 9 տառաչափով, իսկ աղյուսակի գլխամասի սյունակները մեծությունների չափողականություններով: Աղյուսակի մի հատվածը հաջորդ էջ տեղափոխելու դեպքում պարտադիր է սյունակների համալրումը, որը կրկնվում է տեղափոխված աղյուսակի հատվածի գլխամասում: Հաջորդ էջը տեղափոխված աղյուսակի հատվածի վրա նշվում է ... Աղ...-ի շարունակությունը...(*Italic*, 9 տառաչափով):

Բոլոր տեղերում (համառոտագիր, տեքստ, նկար, աղյուսակ) չափողականությունները տրվում են *Italic*, 9 տառաչափով:

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տրվում են Microsoft Equation, *Italic*, 10 տառաչափով: Բանաձևերը ներկայացվում են առանձին տողով և մեջտեղում, իսկ հիմնականները նաև համարակալվում են նույն տողի աջ անկյունում փակագծերի մեջ: Ցանկալի է բանաձևերում կոտորակային արտահայտությունները ձևավորել a/b կամ ab^{-1} տիպի սիմվոլներով:

Հոդվածի վերջնամասից, մեկ տող ներքև, մեջտեղում նշվում է **Գրականություն** արտահայտությունը (փոքրատառ, **bold**, 10 տառաչափով/ և ըստ ընդունված ստանդարտի, 9 տառաչափով տրվում է գրականության ցանկը՝ համարակալված ըստ օգտագործման հերթականության, հեղինակի (ների) Ազգանունը Ա.Հ. 9 տառաչափով, հոդվածի վերնագիրը և հրատարակման տվյալները: Ցանկալի է գրականության ցանկում ընդգրկել 6-8 անվանումից ոչ ավելի հրատարակումներ:

Հոդվածը պարտադիր <u>գրախոսվում է</u>:

Հոդվածի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 6 էջը: Ժողովածուի ձևավորումը և հավաքումը հեշտացնելու նպատակով հեղինակներին առաջարկվում է լրիվ օգտագործել <u>հոդվածի վերջին էջի դաշտը</u>:

Հոդվածը ներկայացնել A4 ֆորմատի վրա տպված (2 օրինակով) և էլեկտրոնային տարբերակով:

Հեղինակների և ամբիոնի վարիչի ստորագրությունները պարտադիր են: Եթե հեղինակը ասպիրանտ է, կամ մագիստրանտ, անհրաժեշտ է նաև գիտական ղեկավարի ստորագրությունը:

Առանձին էջի վրա ներկայացնել զեկուցման վերնագիրը, հեղինակի (ների) ազգանունը, անունը, հայրանունը, կոչումը (պրոֆ., դոց., ասպ., մագ., ուս.), աշխատավայրը և հեռախոսի համարը: